ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
«ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նիկոլայ Բաղդասարյանի, Ռուբեն Հակոբյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգը հաստատելու մասին հարցը,

նկատի ունենալով այն, որ Պալատի նախագահը ներկայացրել է կարգի նախագիծը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Պալատի խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- *Հաստատել «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգը համաձայն հավելվածի:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

05 փետրվար 2014թ.
թիվ 3/7-Լ
ք.Երևան